
**ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՃԸ ԱՆԴԴՈՎՎԱՍՈՒՄ ԸՍՏ 1897 Թ.
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ**

ԱՍՈՅԱՆ Լ. Ա.

Դեռևս XIX դ. 60-ական թվականներին Ռուսական կայսրությունում, կապված տնտեսական զարգացման առաջընթացի հետ, երկրի տնտեսական և մարդկային ռեսուրսների հաշվառման պահանջ առաջացավ: Անհրաժեշտ էին ստույգ տեղեկություններ ոչ միայն բուն եվրոպական Ռուսաստանի, այլև նոր նվաճված /ինչպիսին էր Կովկասը/ և պարզապես քիչ ուսումնասիրված /ինչպիսիք էին Միջին Ասիան և Սիբիրը/ ծայրամասերի ազգաբնակչության և տրնտեսական ռեսուրսների մասին: 1895 թ. հունիսի 5-ին Նիկոլայ II-ը հաստատեց Պ. Մեյնոնով-Տյան-Շանսկու մշակած «Կանոնադրություն ռուսական կայսրությունում առաջին համընդհանուր մարդահամարի մասին»¹ ծրագիրը, որում ամփոփված էին մարդահամարի նպատակն ու կազմակերպման մեթոդիկան: Կովկասում այն անցկացվելու էր ներքին գործերի նախարարության կազմած հատուկ կանոններով, որոնք համաձայնեցված էին նաև համապատասխան նախարարությունների և տեղական կառավարիչների հետ: Այստեղ պետք է կատարվեր ինչպես նստակյաց, այնպես էլ քոչվոր բնակչության հատուկ, մանրամասն հաշվառում²:

1897թ. Անդրկովկասի տարածաշրջանն ընդգրկում էր Թիֆլիսի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Երևանի և Բաքվի նահանգներն ու Կարսի մարզը, ուր 184222,8 վերստ տարածքի վրա բնակվում էր 4934614 մարդ: Բնակչության թվով ամենամեծը Քութայիսի /1058241/ և Թիֆլիսի /1051032/, ամենախիտ բնակեցվածը՝ Երևանի /35,71 մարդ մեկ վերստ վրա/ և Քութայիսի /33,02 մարդ մեկ վերստ վրա/ նահանգներն էին: Բոլոր այս նահանգներն աչքի էին ընկնում խայտաբղետ էթնիկ կազմով: Տարածաշրջանում բնակվում էին շուրջ 54 էթնիկ խմբեր, որոնց կազմում նշանակալի էր հայ ազգաբնակչության թիվը: Հայերը ներկայացված էին տարածաշրջանի բոլոր նահանգներում և մարզերում: Այսպես, Երևանի նահանգում բնակվում էր 441000 հայ, Ելիզավետպոլում՝ 292188, Թիֆլիսում՝ 196189, Բաքվում՝ 52233, Քութայիսում՝ 24043 և Կարսի մարզում՝ 73406 հայ: Հայերի տեսակարար կշիռը հատկապես մեծ էր Երևանի /53,2 %/, Ելիզավետպոլի /33,3

¹ Положение о первой всеобщей переписи населения Российской империи, СПб., 1895.

² Центральный государственный военно-исторический архив, ф.401, оп. 5/925, д. 48, л.

%/ նահանգներում և Կարսի մարզում /25,3 %/, որոնք ընդգրկում էին նրանց պատմական հայրենիքի մի մասը:

Ըստ 1897թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի նյութերի, Երևանի նահանգն Անդրկովկասի տարածաշրջանում չորրորդն էր բնակչության թվով /829556 մարդ / և զիջում էր Քուրայիսի, Թիֆլիսի և Բաքվի նահանգներին, ուր դարավերջին լուրջ տեղաշարժեր էին կատարվում տնտեսական զարգացման մեջ՝ արդյունաբերության ու առևտրի ընդլայնման և հումքային ռեսուրսների շահագործման առումով: Այնուամենայնիվ, ցարական կառավարության տնտեսական քաղաքականությունը և խաղաղ պայմանները նպաստում էին ինչպես պարսից տիրապետության օրոք քայքայված տնտեսության վերականգնմանը, այնպես էլ բնակչության թվի ավելացմանը³: Բնակչության աճի տեմպերը բարձր էին հատկապես Երևանի /35,7 %/, Էջմիածնի /28,8 %/, Սուրմալուի /25,9 %/ գավառներում, որն արդյունք էր և բնական աճի, և մեխանիկական շարժի՝ պայմանավորված եվրոպական Ռուսաստանի մի շարք նահանգներից բնակչության վերաբնակեցմամբ՝ Վորոնեժի, Դոնի կազակական, Մարատովի, Սիմբիրսկի, Պոլտավայի, Խարկովի մարզերից և նահանգներից միայն Երևանի նահանգում բնակչություն հաստատեց 7987 մարդ, որից 6294-ը հիմնվեց քաղաքներում, իսկ 1693-ը՝ գավառներում: Վերոհիշյալ նախադրյալները XIX դ. ընթացքում լուրջ փոփոխություններ առաջ բերեցին ոչ միայն նահանգի առանձին գավառների և քաղաքների բնակչության թվաքանակի, այլև բնակչության խտության, նրա էթնիկ կազմի մեջ: Փոխվում էր գավառի ու գավառական կենտրոնների ժողովրդագրական պատկերը: Միայն 1828-1831 թթ. ընթացքում Անդրկովկաս է տեղափոխվել 135 հազ. հայ, այդ թվում 90000-ը՝ Թուրքիայից, 45000-ը՝ Պարսկաստանից⁴: Պարսկաստանից գաղթած հայերը բնակվում էին հիմնականում Նախիջևանում, Շարուր-Դարալագյազում, Երևանի, Սուրմալուի, Էջմիածնի և մասամբ Նոր Բայազետի գավառներում ու Ղարաբաղում: Իսկ Արևմտյան Հայաստանից բռնագաղթածները բնակչության վայր էին ընտրում Սևանա լճի շրջակայքում, Շիրակի, Փամբակի, Ջավախքի և այլ տարածքներում⁵: Նահանգում առավել մեծ թիվ էին կազմում հայերը /53,16 %/: Նրանց զիջում էին թուրքալեզու ժողովուրդները՝ 37,8 %, ապա այս շրջանում ավելի ուշ բնակչություն հաստատած ռուսները /1,9 %/: Հայերն ու ռուսները հիմնականում բնակվում էին Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և Երևանի գավառներում, թաթարները՝ Երևանի, Նախիջևանի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի գավառներում, իսկ քրդերը՝ Սուրմալուի և Էջմիածնի գավառներում:

³ Адонц М. А., *Социально-экономическое развитие Восточной Армении после присоединения к России*, Е., 1966, с. 208.

⁴ *Собрание актов, относящихся к истории образования армянского народа*, М., 1838, с. 180-181.

⁵ *Памятная книжка Ереванской губернии на 1908 год*, СПб., 1909, с. 16-17.

Երևանի նահանգի բնակչության հիմնական գրադմունքը գյուղատնտեսությունն էր, որով գրադված էր 737080 մարդ կամ բնակչության 88,9 %-ը: Հայերի թիվը համեմատաբար մեծ էր վարչական կառույցներում՝ 555 մարդ, զինված ուժերում՝ 1320, եկեղեցու սպասավորների մեջ՝ 743, կրթադաստիարակչական բնագավառում՝ 184 և այլն: Գերակշռում էին բազմանդամ ընտանեկան տնտեսությունները, որոնց անդամների թիվը միջին հաշվով կազմում էր 7,1 մարդ:

Երևանի նահանգում խիստ ցածր էր բնակչության գրագիտության մակարդակը. գրագետ էր 52703 մարդ կամ բնակչության 6,4 %-ը: Այդ թիվը համեմատաբար մեծ էր քաղաքներում՝ 25100 մարդ կամ քաղաքային բնակչության 27,2 %-ը և խիստ նվազ էր գավառներում՝ 27603 մարդ կամ գավառական բնակչության 3,7 %-ը: Բնակչության մեծագույն մասն /776853 մարդ/ անգրագետ էր: Նույնիսկ նահանգական կենտրոն Երևանում 29006 բնակչից գրագետ էր 8500 մարդ կամ 29,3 %-ը:

Երևանի նահանգից հետո Անդրկովկասի տարածաշրջանում հայերի թվաքանակն ամենամեծն էր Ելիզավետպոլի նահանգում: Այն կազմում էր բնակչության 33, 3 %-ը: Հայերը բացարձակ մեծամասնություն էին Շուշիի գավառում /53, 2 %/ և մեծ թիվ էին կազմում Չանգեգուրի /46, 1 %/ ու Ղազախի /38, 8 %/ գավառներում: 1886 թ. համեմատությամբ, հայերի թիվը Ելիզավետպոլի նահանգում 257108-ից 1897թ. հասել էր 292188-ի⁶, այսինքն՝ 10 տարվա ընթացքում հայ բնակչությունն աճել էր 35080-ով: Հայերի, ինչպես նաև նահանգի ողջ բնակչության, հիմնական գրադմունքն էր գյուղատնտեսությունը /3316 մարդ գրադվում էր հողագործությամբ, իսկ 2271-ը՝ անասնապահությամբ/: Սշակում էին ծխախոտ, պատրաստում զինի և չամիչ: Խաղողն ու ծխախոտն արտահանվում էին Թիֆլիս, իսկ մնացած կուլտուրաները՝ նահանգի այլ գավառներ: Մեծ եկամուտ էր բերում շերամապահությունը⁷: Հայերն ընդգրկված էին նաև սպասարկման /5319 մարդ/, առևտրի /2418/, վերամշակող արդյունաբերության /3134/, պետծառայության /1083/ ոլորտում: Ըստ 1897 թ. մարդահամարի, Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչության ընդհանուր թվից /292188/ գրագետ էր 19631-ը, որից 10325-ը՝ քաղաքներում, 9306-ը՝ գավառներում: Ընդ որում, ռուսերենի իմացությամբ գրագետ էին 7364-ը /2960-ը՝ գավառներում, 4404-ը՝ քաղաքներում/, այլ լեզուներով՝ 10330-ը /5970-ը՝ գավառներում, 4360-ը՝ քաղաքներում/, տարրականից բարձր կրթություն ունեին 1937-ը /376-ը՝ գավառներում, 1561-ը՝ քաղաքներում/: Գրագիտության տոկոսը բարձր էր /ինչպես և մյուս նահանգներում/ ազնվականների /17,3 %/, հոգևորականների /36,3 %/, քաղբեհիների /18 %/ դասերի ներկայացուցիչների շրջանում և խիստ ցածր՝

⁶ *Кавказский календарь на 1897 год, Тифлис, 1898, с. 63.*

⁷ *Всеобщая история Российского государства. Раздел истории городов., т.2, СПб, 1866, с.769.*

գյուղացիության մեջ /2, 9 %/: Վերջինիս ստվար քանակով էր պայմանավորված գրագիտության ցածր մակարադակը նահանգում:

Այլ էր հայ ազգաբնակչության տեղաբաշխումը Թիֆլիսի նահանգում, որն իր աշխարհագրական դիրքով և բնակլիմայական պայմաններով բարենպաստ էր թե՛ գյուղատնտեսական աշխատանքների, և թե՛ առևտրի համար: XIX դ. վերջին Ռուսական կայսրության ներքին քաղաքականության հետևանքով Թիֆլիսի նահանգում 1886 թ. համեմատությամբ համառուսաստանյան մարդահամարն արձանագրեց բնակչության կրկնակի աճ: 7283 հայ՝ Թուրքիայից, 6072-ը՝ Պարսկաստանից բնակություն հաստատեցին Ախալքալաքի, Ախալցխեի, Բորչալուի և Գորիի գավառներում՝ դառնալով վրացիներից հետո երկրորդ խոշոր էթնիկ տարրը: 1886 թ. տվյալներով⁸, հայ ազգաբնակչությունը գերիշխող էր Ախալքալաքի, Ախալցխեի, Դուշեթի, Սղնախի գավառներում, Թելավի քաղաքում ու Բոգդանովկայի ոստիկանական բաժնում և կազմում էր բնակչության 13%-ը⁹: Ընդհանուր առմամբ, ըստ վերոհիշյալ հաշվարկների, հայերը Թիֆլիսի նահանգում կազմում էին 158323 մարդ¹⁰: Իսկ ըստ 1897թ. տվյալների այդ թիվը հասել էր 196189-ի՝ ավելանալով 37866 մարդով կամ 24 %-ով: Հայերի հիմնական մասը դավանանքով առաքելական էր՝ 210161 մարդ, որից 81778-ը՝ քաղաքներում, 128383-ը՝ գավառներում: Նահանգի բնակչության հիմնական մասը գյուղացիությունն էր՝ 82,2 % կամ 863918 մարդ, որի 14,9 %-ը կամ 129015-ը հայ էր: Նրանցից 89,2 %-ը կամ 115066 մարդ բնակվում էին գավառներում, 13949-ը կամ 10, 8 %-ը՝ քաղաքներում: Մեծ էր հայ վաճառականության ու քաղբենիների թիվը: Մրանցից ինքնուրույն զբաղմունք ունեւ 48144-ը կամ հայ բնակչության 24,5 %-ը: Անդրկովկասի մյուս նահանգների հայ բնակչության զբաղվածության ցուցանիշների համեմատությամբ, Թիֆլիսի նահանգի հայ բնակչությունը տոկոսով զիջում էր Երևանի /47,6 %/, Ելիզավետպոլի /28,6 %/ նահանգների և Կարսի մարզի /22,6 %/ բնակչության ցուցանիշներին: Նահանգի վարչական կառույցներում, դատական ու ոստիկանական ծառայություններում աշխատում էր 400 հայ: Նրանց թիվը զգալի էր նաև հասարակական գործունեություն ծավալողների մեջ /228/, զինված ուժերում /1193/, եկեղեցական սպասավորների թվում /166/, ուսումնադաստիարակչական գործում /271/, գիտության, գրականության և արվեստի գործիչների մեջ /97/, բժշկասանիտարական ծառայությունում /185/ և այլն: Մրանց ընդհանուր թվից /196189/ գրագետ էր 38632-ը կամ 19,7%-ը, որից ռուսերենով գրագետ էր 5927-ը, այլ լեզուներով՝ 17319-ը, տարրականից բարձր կրթություն ունեւ 5386-ը: XIX դ. վերջին էթնիկ

⁸ Свод статистических сведений по Закавказскому краю, ч. 1, Тифлис, 1902, с. 22.

⁹ Военно-географическое и статистическое описание Кавказского военного округа. Обзор в санитарном отношении, СПб., 1907, с.153.

¹⁰ Первая всеобщая перепись населения Российской империи, т.61, Бакинская губерния, СПб., 1905, таб. XIII.

փոփոխությունների էր ենթարկվում և աստիճանաբար ավելանում նաև Բաքվի նահանգի բնակչությունը: Բաքվի նահանգը, նավթի արդյունահանման և վերամշակման շնորհիվ դարձավ արագ զարգացող արդյունաբերական տարածաշրջաններից մեկը: Այդ գործընթացը հատկապես արագ էր Բաքու քաղաքում՝ կապված նավթարդյունաբերության մեջ ներգրավվող աշխատուժի ներհոսի հետ: 1897 թ. Բաքվում ապրում էր նահանգի ամբողջ բնակչության 20%-ը¹¹: Այստեղ հաստատվել էր մոտ 45000 ադրբեջանցի, ավելի քան 37000 ռուս, 19000-ից ավելի հայ /17, 06 %/¹²: Նավթարդյունաբերության և առևտրի բուռն զարգացումը, ինչպես նաև աշխատանք ունենալու ցանկությունը հիմնականում հողագուրկ հայ գյուղացիությանը բերել էր Բաքու ոչ միայն նահանգի այլ գավառներից, այլև հարակից նահանգներից: Հայերը կենտրոնացված էին Բաքվի /12,3 %/, Գյուլչայի /11,03 %/ և Շամախու /11,7 %/ գավառներում: Այստեղ բնակվող հայերի թիվը բավականաչափ զիջում էր Երևանի /53,2 %/, Ելիզավետպոլի /33,2 %/ և Թիֆլիսի /8,7 %/ նահանգներում ապրող հայերի թվաքանակին:

Բաքվի նահանգի բնակչության 81,5 %-ը գյուղացիներ էին, որոնց մեջ հայերը կազմում էին ընդամենը 35744 մարդ կամ 5,3 %, որից 27518-ը՝ գավառներում, 8226-ը՝ քաղաքներում: Հայ գյուղացիության թիվը փոքր էր, քանզի Բաքվի նահանգը բնակեցված էր գերազանցապես մահմեդականներով՝ 676243 մարդ կամ բնակչության 82 %-ը, իսկ հայ առաքելականները կազմում էին ընդամենը 52563 մարդ կամ 6,4 %¹³: Հայերից ինքնուրույն զբաղմունքով ապահովված էր 18936 մարդ, որոնց հիմնական մասը վաճառականներ էին, պետական ծառայության և տնտեսության այլ ոլորտների մեջ ներգրավված անձինք (պետական ծառայություն՝ 207 մարդ, զինված ուժեր՝ 198, մասնավոր ծառայություն՝ 2765, հանքափորություն՝ 1651, մետաղամշակություն՝ 1125, առևտուր՝ 760 մարդ): Գրագետ էր հայերի 24,4 %-ը, մինչդեռ Բաքվի նահանգում բնակչության գրագիտության տոկոսը ընդամենը 7,9 էր, իսկ քաղաքային բնակչության մեջ՝ 26,4: Կայսրության մեջ գրագիտության մակարդակով, մյուս նահանգների համեմատությամբ, Բաքվինը զբաղեցնում էր ամենավերջին տեղերից մեկը: Այս երևույթը հիմնականում պայմանավորված էր կրթության և գրագիտության նկատմամբ ծայր աստիճան անտարբեր մահմեդական ազգաբնակչության գերակշիռ թվով¹⁴:

Տնտեսության զարգացման և բնակչության աճի առումով այլ պատկեր ուներ Քութայիսի նահանգը, որտեղ 1886 թ. տվյալներով ապրում էին 16399 հայեր¹⁵: Նրանք բնակվում էին Արդվինի գավառում ու համանուն քաղաքում: Իսկ

¹¹ *Первая всеобщая перепись населения Российской империи, т. 61, таб.1.*

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, աղյուսակ 12:

¹⁴ *Первая всеобщая перепись населения Российской империи, т.64, Карсская область, СПб., 1904, с. IX.*

¹⁵ *Сборник статистических сведений по Закавказскому краю, с. 22.*

1897թ. հայերի թիվը հասավ 24043՝ ավելանալով 7644-ով կամ 46,61 %-ով: Հայերից 9311-ը կամ նահանգի բնակչության 38,7 %-ն ուներ ինքնուրույն զբաղմունք /հիմնականում արհեստ ու առևտուր/ և կերակրում էր ընտանիքի 14732 անդամի, 1883-ը զբաղվում էր հողագործությամբ, 2892-ն ընդգրկված էր մասնավոր ծառայություններում, իսկ 71-ը՝ վարչական կառույցներում և այլն: Գրագետ էր հայ ազգաբնակչության 24,9 %-ը կամ 5999 մարդ:

Այդ թվում ռուսերենով գրագետ էր 1602 մարդ, այլ լեզուներով՝ 4070: Խիստ ցածր էր միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցողների թիվը, որը հատկանշական էր նաև Կարսի մարզի համար: Այստեղ ևս բնակվում էին տարբեր ժողովուրդներ՝ հայեր /73406/, ռուսներ /27856/, թուրքեր /65854/, քրդեր /42968/, հույներ /32593/ և այլ ազգեր: Հայերը մարզում մեծ թիվ էին կազմում՝ 73406 մարդ /25,25%/, որից 16616-ը բնակվում էր քաղաքներում, իսկ 56790-ը՝ շրջաններում: Հայերի թիվը համեմատաբար մեծ էր Կարսի /46715/ և Կաղզվանի /21648/ շրջաններում: Օլթիի և Արդահանի շրջաններում այդ թվերը համապատասխանաբար կազմում էին 3125 և 1918 մարդ: Հայերի մեծ մասը՝ 71123 մարդ, առաքելական էր, 1844-ը՝ կաթոլիկ: Նրանցից 48030-ը գյուղացիներ էին, 934-ը՝ քաղքենի, 619-ը՝ հոգևորական և 240-ը՝ ազնվական: Համեմատաբար փոքր թիվ էին կազմում հայ վաճառականները՝ 219 մարդ:

Կարսի մարզում ցածր էր գրագիտության մակարդակը: Գրագետ էր բնակչության ընդամենը 10,8 (-ը կամ 31339 մարդ: Իսկ 73406 հայերից գրագետ էր 7142-ը կամ 9,72 (-ը, որից 2658-ը տիրապետում էր ռուսերենին, 4347-ը՝ այլ լեզուների: Բնակչության կենսապահովման հիմնական աղբյուրը մեծ մասամբ ներկայացված էր հողագործությամբ ու անասնապահությամբ: Ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների, մարզի ազգաբնակչությունից 238889 մարդ զբաղվում էր գյուղատնտեսությամբ, իսկ 11325 մարդու կենսապահովումը կապված էր լրացուցիչ այլ զբաղմունքների հատկապես արհեստների հետ: Անասնապահությամբ, որ կերակրում էր 3393 մարդու, զբաղվում էին հատկապես Արդահանի /17,5 (/ Կաղզվանի /3,9 (/ և Օլթիի /3,9 (/ շրջաններում: Համեմատաբար փոքր էր արդյունաբերության, արհեստների, պետական ծառայության, ինչպես նաև այլ զբաղմունքներում ընդգրկվածների թիվը:

1897թ. մարդահամարի տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ Անդրկովկասի տարածաշրջանում հայ բնակչությունը XIX դ. վերջին բավական մեծ թիվ է կազմել և ներկայացված է եղել բոլոր նահանգներում: Հայերը մեծամասնություն են կազմել Երևանի նահանգում /53,2 %/, զգալի կշիռ ունեցել Ելիզավետպոլի /33,3 %/ և Թիֆլիսի /18,7 %/ նահանգներում, Կարսի մարզում /Կարս և Կաղզվանի օկրուգներում, 25,3 %/: Նրանք հաջողությամբ զբաղվել են գյուղատնտեսությամբ, առևտրով, արհեստագործությամբ և արդյունաբերությամբ: Իրենց գրագիտությամբ և ուսումնական հաստատություններ հաճախողների թվով հայերը երկրորդն են եղել ռուսներից հետո, որը խոսում է նրանց կրթական բարձր

մակարդակի և տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքում ունեցած գործուն մասնակցության մասին:

**РАСПРЕДЕЛЕНИЕ И РОСТ ЧИСЛЕННОСТИ АРМЯН В ЗАКАВКАЗЬЕ
ПО ДАННЫМ ПЕРЕПИСИ 1897 г.**

АСОЯН Л. А.

Резюме

Материалы Первой всеобщей переписи населения Российской империи позволяют заключить, что первостепенная роль в общественно-экономической жизни Закавказья в конце XIX века принадлежала армянам, которые были представлены во всех губерниях и областях региона, составляя основную массу населения в Эриванской (53,2%), Елизаветпольской губерниях (33,3%) и Карсской области (25,3%). Численность армянского населения в крае значительно возросла как за счет естественного, так и механического прироста населения, которое, занимаясь сельскохозяйственными промыслами, добывающей промышленностью и торговлей, во многом способствовало экономическому процветанию региона, а высокая степень грамотности позволяла армянам поступать на государственную службу и представлять интересы населения на разных административных уровнях.